Տեսողքն աճարեկ եղել՝
յոլովից են կարծիս առել։
Հաւատապետ տար զծառերդ ի քաշ,
լեր օժանդակ 'ւ ասեն քեզ վա՜շ.
Զաշխարհակալդ արա ի հրաշ,
որ քեզ ասեն յոլով շաբաշ։

## 4. Ի ԶԱՔԱՐԻԱՅԷ

Քոյ քունդ արթնութիւն արժէ,
զիմաստնոյն բանն առ քեզ բերեմ,
Որպէս Սողոմոն գրէ,
սիրտս արթուն է 'ւ ես կու նրնջեմ.
Գեմ քունն է քնար կենաց
ու դարման մարմնոյն, 'ւ իրաւեմ.
Բայց յոլովն չար բերէ,
զայս ասեմ բնաւ չամաչեմ։
Քնար եւ երազ տեսար
բախտաւոր դու ի քնութենէ,
Նախախնամողըն վերին
հանապազ քեզ առաջնորդէ.
Զիարդ զուրուական պատկերդ
ադաչես նայ քեզ պատեհ չէ,
Ծանիր զարարիչն Աստուած
որ արար զէակս յանգոյէ։

## 5.

Դառնատեսիլ այս խեցգետին,
որ աւրինակ էր Հայկազին,

---

**4.** Թ. 98. Թղ. 38ա։ Հ. Տաշեան, անդ, դնելով նոյն տաղ, որ Թ. 319. Թղ. 102ա ունի միայն նախընթաց տունը «Քո քունդ արթնութիւն արժէ.» այսպէս ալ որդէն կը նկատենք Թ. 98ի մէջ, ուր Զաքարիա իրեն կը վերագրէ ԶՔ համառօտագրութեամբ միայն յաջորդ 4 տողերը՝ Քնար եւ երազ ևն, իսկ նախորդ մասը Խաչատուրայ։ Թ. 319ի մէջ կան տարբերութիւններ 1. քո։ — 3. գէմ. որ գարման մարմնոյդ իրաւեմ։

**5.** Թ. 98, Թղ. 51Aա. այս հատուածին հրատարակած է Հ. Տաշեան, անդ 132։ Առաջին մասը, ինչպէ-